600.0021.13.10.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 հոկտեմբերի 2000 թվականի № 21
քաղ. Երևան

Կենցաղային կարիքների համար բնական գազի մատակարարման (Մատակարար-Բաժանորդ) պայմանագրի օրինակելի ձևը հաստատելու մասին

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի դ) կետը, ՀՀ էներգետիկայի հանձնաժողովը **որոշում է.**

1. Հաստատել կենցաղային կարիքների համար բնական գազի մատակարարման (մատակարար-բաժանորդ) պայմանագրի օրինակելի ձևը (կցվում է):
2. Ուժը կորցրած ճանաչել ՀՀ էներգետիկայի հանձնաժողովի 1998 թվականի հունվարի 9-ի №22 որոշմամբ հաստատված՝ Բաշխող-Բաժանորդ (բնակչության համար) պայմանագրի օրինակելի ձևը:
3. «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ին՝ մինչև 2001 թվականի մարտի 31-ը վերակնքել սպառողների հետ կնքված պայմանագրերը՝ դրանք համապատասխանեցնելով սույն որոշմամբ հաստատված օրինակելի ձևին:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀՀ էներգետիկայի հանձնաժողովի
նախագահի տեղակալ՝ **Ն. Գրիգորյան**